Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարեր (2024-2025 ուստարի)

(Տևողությունը 3 ժամ)

11-րդ դասարան

1. Գրի՛ր որևէ ասույթ կամ քառյակ Թումանյանի մասին։ Ներկայացրո՛ւ «Անուշ» պոեմում արծարծված հարցերը։ Բնութագրի՛ր Անուշին՝ ըստ պոեմի (արտաքին գեղեցկությունը)։ Արդարացնո՞ւմ ես նրանց փախուստը։

10 միավոր

2. Ո՞վ է Գրիգոր Զոհրապը։ Ներկայացրո՛ւ Զոհրապի հասարակական-քաղաքական գործունեությունը։ Ժամանակակից ո՞ր գրողն է ներկայացրել Զոհրապի եղերական վախճանը։ Նշի՛ր ստեղծագործությունը և մեկնաբանի՛ր վերնագիրը։

10 միավոր

3. Ո՞վ է Լևոն Շանթը։ Ե՞րբ է գրվել «Հին աստվածներ» դրաման. ինչո՞վ է պայմանավորված վերնագիրը։ Ի՞նչ երազների մասին է խոսվում դրամայում. ո՞վ է բերում այդ երազները, և ո՞ւր են անհետանում դրանք։ Գրի՛ր 10 տող՝ Իջե՛ք, իջե՛ք.....

10 միավոր

4. Գրի՛ր Չարենցի՝ Իսահակյանին նվիրված բանաստեղծությունից մի հատված։ Ինչպե՞ս ես մեկնաբանում Իսահակյանի «Կտակը»։ Համամի՞տ ես վերջին տողին(4-5 տողով մեկնաբանի՛ր)։

10 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան